

## Աշխատանքային հանդիպում Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիայում

11.02.2014



2014 թվականի փետրվարի 10 ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիայի գրասենյակում աշխատանքային հանդիպում ունեցավ ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Կարեն Ասմարյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ՀՀ Վայոց ձորի մարզում վոլեյբոլի առկա վիճակի և զարգացման հեռանկարներին վերաբերող հարցեր: Ֆեդերացիայի գլխավոր քարտուղարն առաջարկեց Վայոց ձորում հիմնել վոլեյբոլի մարզային ֆեդերացիա, որը կնպաստի վոլեյբոլի զարգացմանը:

Իր հերթին ՀՀ Վայոց ձորի մարզպետը՝ Էդգար Ղազարյանը, հույս հայտնեց, որ վոլեյբոլի ֆեդերացիայի հետ սերտ հարաբերությունները խթան կհանդիսանան մարզում մարզաձևի զարգացման համար. և տեղի թիմերը կսկսեն ակտիվորեն մասնակցել տարբեր առաջնություններին: Քննարկվեցին նաև Վայոց ձորում վոլեյբոլի հանրապետական առաջնությունների կազմակերպման հնարավորությունների, մարզիչների և մրցավարների համար հատուկ դասընթացների կազմակերպման և այլ բնույթի հարցեր: